ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2023թ. մարտի 27-28-ը Վրաստանի (Թբիլիսի) կատարած գործուղման արդյունքների մասին

1. **Անունը, ազգանունը՝**

   Անի Իսպիրյան:

2. **Զբաղեցրած պաշտոնը՝**

   ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ:

3. **Գործուղման վայրը և ժամկետները՝**

   Վրաստանի (ք. Թբիլիսի) 2023թ. Մարտի 27-28-ը:

4. **Հրավիրող կողմը**

   Գազել Ֆինանս ամսագրի հրավեր:

5. **Գործուղման նպատակը՝**

   Gazelle Women in Business համաժողովին մասնակցելու «բիզնես և ֆինանսներ» պանելում, որպես բանախոս հանդես գալու նպատակով:

6. **Քննարկված թեմաները՝**

   Կնոջ դերը ղեկավար պաշտոններ զբաղեցնելիս, կանայք բիզնեսում, կանանց կարևորությունը, մարտահրավերները, պոտենցյալի ճիշտ օգտագործումը, առաջնորդ կին լինելու հմտությունները, նոր գաղափարների օգտագործման մեխանիզմները, բարենպաստ գործարար միջավայր ունենալը և այլն:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ Անի Իսպիրյանը իր ելույթում նշել է, զբաղեցնելով Հայաստանի էկոնոմիկայի նախարարի տեղակալի պաշտոնը տեսել եմ այն ազդեցությունը, որ կանայք կարող են ունենալ գործարար միջավայրում, ինչպես պետք է օգտագործել կանանց թաքնված առավելությունները: Նշել է նաև, որ Հայաստանի պետական համակարգում կանայք նույնպես շատ կարևոր պաշտոններ են զբաղեցնում տարբեր ոլորտներում, դատախազից մինչև նախարարներ, ովքեր զգալի ներդրում ունեն հասարակության մեջ:

Միջոցառմանը մասնակցել են նաև՝ Վրաստանի նախագահ Սալոմե Զուրաբիշվիլին, Վրաստանում ԱՄՆ դեսպան Կելի Դեգնանը, ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի անդամ Հասմիկ Ղահրամանյանը, Գազել Ֆինանս ամսագրի ղեկավար կազմը և այլոք:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

Համաժողովի ընդացքում որոշվել է ավելի հաճախ կազմակերպել նմանատիպ միջոցառումներ, ընդլայնելով մասնակիցների աշխարհագրությունը, անդրադառնալ ավելի նեղ թեմաների, գտնելով դրանց լուծումները: Ինչպես նաև օգտագործելով առիթը, ներկա բիզնեսի ներկայացուցիչներին ներկայացրել է Հայաստանի ներդրումային դաշտի գրավչությունը, առաջարկելով Հայաստանը դիտարկել որպես ներդրումներ կատարելու երկիր:

9. Ստորագրությունը, ամսաթիվը՝

31.03.2023